ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 ապրիլի 2019թ. թիվ 153-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ԹԻՎ 75-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 9, 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Նորաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի նախագահի 18.03.2019թ. գրությունը, ծնողական խորհրդի նախագահի 19.03.2019թ. գրությունը և Սարչապետ համայնքի ղեկավարի 19.03.2019թ. թիվ 125-19 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

«ՀՀ Լոռու մարզի Նորաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ մասում «Ռստակյան Անժիկ» բառերը փոխարինել «Ալեքսանյան Գոհար» բառերով, «Բաղալյան Անուշ» բառերը՝ «Մամիկոնյան Լալա» բառերով, «Ստեփանյան Սվետլանա» բառերը՝ «Ղազարյան Ժաննա» բառերով, «Էլոյան Արմինե» բառերը՝ «Ստեփանյան Սվետլանա» բառերով, «Մկրտչյան Ամալյա» բառերը՝ «Նիկողոսյան Հովհաննես» բառերով, «Հովհաննիսյան Սամվել» բառերը՝ «Յախշիբեկյան Միսակ» բառերով և «Բաղդասարյան Արմեն» բառերը՝ «Գրիգորյան Մարգար» բառերով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

03/04/2019

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. ապրիլի 3
ք.Վանաձոր